



Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան



Լուսափայլ



Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Պ Յ Ա Ն
Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ւ Տ



Հավասար պայմաններ եւ հավասար հնարավորություններ

ԶԵԿՈՒՅ

2021

Այս հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ֆինանսական օժանդակությամբ և Հանրային քաղաքականության ինստիտուտի խորհրդատվական աջակցությամբ:

Հետազոտության եզրահանգումներն արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստանի և Հանրային քաղաքականության ինստիտուտի ղիրքորոշումների ու տեսակետների հետ:



Հետազոտության փորձագետ՝ Անի Մկրտչյան

Հավասար պայմաններ եւ հավասար հնարավորություններ

«Ուսումնասիրությունը կատարվել է Գյումրու նախադպրոցական կրթության համակարգում»

ԶԵԿՈՒՅՑ

«Անի պարտեզ», «Հուստ առագաստ», Գյումրու «Մանկիկ», «Լիանա», «Լապտերիկ», , «Հենգել եւ Գրետել», «Կարմիր Գլխակ», «Փարոս», «Ժպիտ», «Երազանք», «Գոհար»
ՀՈԱԿ-ներ



Բովանդակություն

<i>Ներածություն.....</i>	<i>5</i>
<i>Ներառական կրթություն.....</i>	<i>7</i>
<i>Ներառական համընդհանուր կրթությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում</i>	<i>8</i>
<i>Բացահայտված ընդհանուր խնդիրը</i>	<i>10</i>
<i>Ներառական կրթության ընկալումները նախադպրոցական ուսումնական հաստատություններում (Գյումրի).....</i>	<i>12</i>
<i>Վերապատրաստման դասընթացների կարելորդությունը.....</i>	<i>15</i>
<i>Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը.....</i>	<i>25</i>
<i>Ծնողների մասնակցությունը ներառական կրթության կազմակերպման գործընթացում ...</i>	<i>27</i>
<i>Ուսումնական հաստատությունների ընտրությունն ու առկա դժվարությունները</i>	<i>30</i>
<i>Ֆինանսավորման խնդիրը</i>	<i>32</i>
<i>Եզրակացություններ եւ առաջարկություններ</i>	<i>35</i>

Ներածություն

«Լուսափայլ» կրթամշակութային հասարակական կազմակերպությունը 2020 թվականի օգոստոս-նոյեմբեր ամիսների ընթացքում ներառական կրթության համակարգի մշտադիտարկում է կատարել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի 11 նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Ընտրվել են այն նախադպրոցական ուսումնական հաստատությունները, որոնք ընդգրկում են քաղաքի բոլոր թաղամասերը:

Ուսումնասիրության նպատակն է՝ նպաստել Գյումրու նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագիտական և տեխնիկական հագեցվածության, ուսումնական ծառայությունների մատուցման որակի բարելավմանը, ինչպես նաև դրական վերաբերմունքի ձևավորմանը հաշմանդամություն ունեցող երեխաների ներառման նկատմամբ՝ իրազեկելով համապատասխան պետական մարմիններին Գյումրու նախադպրոցական ուսումնական հաստատություններում տիրող իրավիճակի մասին:

Խնդիրներն են՝ ուսումնասիրել

1. Գյումրու համայնքապատկան նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների ընդունելության և կարիքի գնահատման ընթացակարգը,
2. կադրային ռեսուրսների հագեցվածությունը և համապատասխանությունը ԿԱՊԿՈՒ երեխաների համար,
3. ֆիզիկական մատչելիությունը և նյութատեխնիկական ռեսուրսները՝ ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին համապատասխան,
4. ֆինանսական հոսքերն ու ծախսերը հատկացված ԿԱՊԿՈՒ երեխաների համար,
5. ներառական կրթության շահագրգիռ կողմերի ընկալումները և վերաբերմունքը ներառական նախադպրոցական կրթության վերաբերյալ,
6. հանրայնացնել ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և տրամադրել շահագրգիռ մարմիններին՝ հստակ եւ արդյունավետ որոշումներ կայացնելու, անհրաժեշտ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու համար:

Ուսումնասիրության մեթոդաբանություն

Ուսումնասիրվել են ներառական կրթությունը կարգավորող և ոլորտին առնչվող իրավական ակտերը՝ կատարվել է փաստաթղթերի վերլուծություն, կիրառվել է դիտարկման և հարցումների մեթոդ:

Կիրառվել են նաև քանակական եւ որակական հետազոտական մեթոդներ ու մեթոդաբանություն: Դիտարկման քարտի միջոցով ուսումնասիրվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների հարմարեցվածությունը, ինչպես նաև նյութատեխնիկական բազան:

Նախապես կազմված հարցաթերթիկների միջոցով հարցումներ են իրականացվել ընտրված 11 համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների, դաստիարակների,

ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրությանը մասնակցել է ներառական կրթության 100 ներկայացուցիչ, որից 38-ը կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք

ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների ծնողներ են: Բացի այդ, ուսումնասիրվել են ԿԱՊԿՈՒ եւ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների, 10 մանկավարժների դիրքորոշումներ: Ընդհանուր իրավիճակային նկարագիր ստանալու համար ուսումնասիրվել են նաեւ ոլորտի փորձագետների կարծիքները:

Ուսումնասիրությունն անդրադարձել է մի շարք հարցերի՝ նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական համակարգի ներդրման, ներառական կրթության գործառնության առանձնահատկությունների, մասնագետների վերապատրաստումների համակարգի, ֆինանսավորման, ներառական կրթության նկատմամբ ԿԱՊԿՈՒ եւ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների վերաբերմունքի, ծնողների՝ ներառական կրթության համակարգում մասնակցության եւ այլն: Ուսումնասիրությունում ընդգրկվել են համակարգում առկա խնդիրների լուծման ուղիներն ու քաղաքականության փոփոխման որոշ առաջարկություններ:

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 38-րդ հոդվածով համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հայաստանում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար»¹: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի (6-րդ հոդվածի 6-րդ կետ), «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով²»: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով: Նշված օրենքը հնարավորություն տվեց հասարակական կազմակերպություններին հանրակրթական դպրոցներում իրականացնելու ներառական կրթության ծրագրեր:

Ներառական կրթությունը, 2000 թվականից, որպես կրթական բարեփոխումների մի մաս, հանդիսանում է ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից:

Կրթության իրավունքը համընդհանուր է եւ պետք է ներառի բոլոր երեխաներին, երիտասարդներին ու մեծահասակներին, որոնք հաշմանդամություն ունեն: Կրթության իրավունքն առաջին անգամ սահմանվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, հետագայում՝ 1960-ական թվականներին Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հռչակագրում, այնուհետ այս իրավունքը սահմանվել է «Երեխայի իրավունքների մասին» հռչակագրում (1989թ) եւ արտացոլվել է միջազգայնորեն ընդունված մի շարք կարեւոր հռչակագրերում. ներառյալ՝ «Կրթություն բոլորի համար» համաշխարհային հռչակագիրը (1990թ) «Հաշմանդամ անձանց համար հնարավորությունների հավասարեցման ստանդարտացված կանոնները (1993թ) Մալամանկայում ՅՈՒՆԵՍԿՕ կազմակերպության կողմից ընդունված որոշումը եւ գործողությունների ենթատեքստը (1994թ) եւ Դակարի գործողությունների ենթատեքստը (2000թ):

¹ <https://cutt.ly/ohP4nBg>

² <https://cutt.ly/MhP4Shs>

Հայաստանի Հանրապետությունը, 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություններից հետեւյալը՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին:

Ներառական կրթություն

2014 թվականին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում կատարվեցին լրացումներ եւ փոփոխություններ: Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 10.3 կետը լրացվեց. «Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է»³:

«Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը: Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է: Կիրառվելու է երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն են ստանալու 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից»⁴:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կայքի փոխանցմամբ՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվելու է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի: Եթե տվյալ մարզում առկա չէ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, ապա մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը կարող է վերա-

³ <https://cutt.ly/chP7Bbx>

⁴ <https://cutt.ly/6hP5cr2>

կազմակերպվել կամ պատվիրակվել այնպիսի կազմակերպության, որում առկա են ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ:

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվելու են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվելու է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգի (ՀՀ կառավարության 16 փետրվարի 2017 թվականի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N 46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 141-Ն որոշում):

Մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը ներդրվելու է համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած գործողությունների պլանի եւ ժամանակացույցի (ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի արձանագրային որոշում՝ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին եւ ժամանակացույցին հավանություն տալու մասին»): 2015թ. փետրվարի 17-ի ՀՀ վարչապետի N108-Ա որոշմամբ՝ հաստատվել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը

«Նոր ձևավորված համակարգը հնարավորություն է ընձեռելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատությունում: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության համակարգ բոլոր հանրակրթական դպրոցներում»⁵:

Ներառական համընդհանուր կրթությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Իրավական կարգավորումներ

2020 թվականի մայիսի 6-ին ԱԺ-ի հաստատմամբ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում կատարվեցին որոշակի փոփոխություններ⁶: Օրենքի առանձնահատկություններից է նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի

⁵ <https://cutt.ly/yhP6Cx1>

⁶ <https://cutt.ly/lhP61EP>

ներդրումը, որը, համաձայն Կառավարության հաստատած գործողությունների պլանի եւ ժամանակացույցի, իրականացվելու է մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 30-ը:

Օրենքում ամրագրված են նոր հասկացություններ, կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդունելության ընթացակարգը եւ այլն:

«Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներով» **(8-րդ հոդված կետ 3):**

**«Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրումը»
(9-րդ հոդված):**

«1. Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի տված՝ երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացության հիման վրա համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինը վկայագրում է երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը:

2. Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրի տիպային ձևը մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային տրամադրվում են նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ»:

**«Օնոդների (երեխայի օրինական ներկայացուցիչների) իրավունքները և պարտականությունները »
(16-րդ հոդված)**

«Օնոդները (երեխայի օրինական ներկայացուցիչները) իրավունք ունեն՝ դիմելու տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ իրենց երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելու նպատակով. մասնակցելու երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատմանը. ուսումնական հաստատությունից պահանջելու խելամիտ հարմարեցումներ երեխայի՝ մյուսների հետ հավասար հիմունքներով նախադպրոցական կրթության իրավունքն իրացնելու նպատակով. մասնակցելու երեխայի անհատական զարգացման և ուսուցման պլանի մշակմանը» :

«Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեությունը» (28-րդ հոդված կետ 3):

«3. Կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն սաները, որոնք ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ՝ 1) ձայնի և խոսքի, 2) լսողական, 3) տեսողական, 4) ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող, 5) շարժողական:

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար

սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սահմանում է Կառավարությունը, որի ընդունման ժամկետ սահմանվել է 2021 թվականի մարտի 15-ը»:

Բացահայտված ընդհանուր խնդիրը

Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներն առավել խոցելի են նախադպրոցական կրթության հաստատություններից դուրս մնալու տեսանկյունից: Ոչ միայն ծնողները նախաձեռնող չեն իրենց ԿԱՊԿՈՒ երեխաներին նախակրթարան, մանկապարտեզ տեղավորելու հարցում՝ նախընտրելով հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները, այլև մանկապարտեզների տնօրենները ցանկություն չունեն ներգրավել ԿԱՊԿՈՒ երեխաներին՝ պատճառաբանելով, որ մանկապարտեզում, նախակրթարանում չկան համապատասխան պարագաներ, մասնագետներ և հատուկ խնամքի պայմաններ: Նախադպրոցական կրթությունից դուրս մնացող երեխաների բացահայտման և հավաքագրման մեխանիզմները բացակայում են, պատասխանատու մարմինները չունեն համապատասխան լիազորություններ: Ավելին՝ նախադպրոցական կրթությունը Հայաստանում պարտադիր չէ:

Մեր հարցումների համաձայն՝ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներին մանկապարտեզների, նախակրթարանների տնօրենները, աշխատողները տեղեկացրել են, որ հաստատությունը չունի առանձնահատուկ կրթության պայմաններ: Մանկապարտեզներն առավել անմատչելի են ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների համար: Հարցման ընթացքում տնօրենները, դաստիարակներն ու ծնողները մատնանշել են հաստատությունների շենքային անբավարար պայմանները, դիդակտիկ պարագաների, կադրային հագեցվածության խնդիրները:

11 տնօրենից 9-ը հարցման ընթացքում ասել է, որ հաստատության շենքային պայմանները չեն համապատասխանում ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին, 2-ը պատասխանել է, որ հաստատությունում առկա է դիդակտիկ պարագաների եւ անհրաժեշտ մասնագետների պակաս:

33 դաստիարակներից 10-ը պատասխանել է, որ հաստատությունում շենքային պայմանների եւ կադրային հագեցվածության խնդիր կա, 8-ը՝ միայն շենքային պայմանների, 5-ը՝ կադրային հագեցվածության, շենքային պայմանների, դիդակտիկ պարագաների, 1 հոգի՝ պետական աջակցության, վառելիքի խնդիր, 2-ը՝ կադրային հագեցվածության, 2-ը՝ կադրային հագեցվածության եւ դիդակտիկ պարագաների, 5-ը՝ դիդակտիկ պարագաների ու շենքային պայմանների:

Հարցված 33 ծնողից 15-ը պատասխանել է, որ հաստատությունում տեսնում է կադրային հագեցվածության խնդիր, 8-ը՝ շենքային պայմանների, 1-ը՝ կադրային հագեցվածության եւ դիդակտիկ պարագաների, 1-ը՝ դիդակտիկ պարագաների, 6-ը՝ շենքային պայմանների, կադրային հագեցվածության, 2-ը՝ չի ցանկացել պատասխանել, 1-ը նշել է «խնդիրներ չկան»:

«Գյումրիում կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների պահանջներին համապատասխան հնարավոր չէ ունենալ լիարժեք պայմաններ:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների պայմաններին ես ծանոթ եմ, չկան մատչելի պայմաններ, դրա համար ոչ ոք մեղավոր չէ: Կան ծնողներ, որոնք չեն ցանկանում, որ իրենց երեխաներն ընդգրկվեն ներառական կրթության համակարգ: Մենք ունեցել ենք զարգացման

խնդիրներ ունեցող երեխաներ, որոնք հիմա լիարժեք կրթություն են ստանում: Ամեն մի երեխայի համար աշխատող մասնագետ է հարկավոր, որը մենք չունենք մանկապարտեզներում: Մանկապարտեզներում առկա է մասնագետների պակասի եւ մատչելիության խնդիր: Ծնողները գրեթե ոչինչ չգիտեն ներառական կրթության մասին, դրա համար էլ որոշ ծնողներ վախենում են: Իրենք տեղյակ չեն նաեւ, որ մասնագետների միջոցով հնարավոր է խնդիրը լուծել, հարթել դժվարությունը: Հաստատությունները պետք է ունենան իրենց մասնագետները եւ չպետք է սպասեն աջակցման կենտրոնների մասնագետներին, այդ երեխաներին պետք է մշտապես աջակցել»,- ասում է հոգեբան, մանկավարժ Արմինե Նիկողոսյանը:

Համընդհանուր ներառական կրթության համակարգում առկա է եւս մեկ խնդիր՝ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները նախընտրում են հասարակությունից թաքցնել ընտանիքի խնդիրները:

«Ծնողների մի մասը վախենում է հասարակական կարծիքից եւ իրեն ճնշված է զգում, հենց սա է պատճառը, որ տարիներ շարունակ նրանք կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, այսպես ասած, թաքցնում են: Նախադպրոցական տարիքից ներառական կրթության կազմակերպումը շատ տեղին է, դրանով լուծվում է իմ նշած խնդիրը»,- ասում է կրթության փորձագետ Տիգրան Գուլյանը:

Հարցազրույցների ընթացքում ծնողները նշել են, որ ավելի հաճախ են նախընտրում մասնավոր ծառայություններն ու հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները, որտեղ վերաբերմունքն իրենց հանդեպ շատ ավելի բարյացկամ է:

«Իմ որդին սկզբում հաճախեց տանը մոտ գտնվող մանկապարտեզ: Առաջին շաբաթում ամեն ինչ հարթ էր թվում, գոհ էինք: Հետո, երբ մանկապարտեզի աշխատողները, ծնողները սկսեցին ուշադրություն դարձնել իմ երեխայի հենաշարժողական խնդիրներին, սկսեցին անտարբեր դառնալ, անգամ՝ ակնարկում էին երեխայիս մանկապարտեզից հանելու մասին: Շաբաթներ անց երեխան այլեւս չուզեց գնալ մանկապարտեզ, պատմում էր, որ իրեն դուր չի գալիս միջավայրը: Ես եւս հասկացա, որ մենք այդտեղ անելիք չունենք եւ երեխային տեղափոխեցի զարգացման կենտրոն, որից գոհ ենք մինչեւ այսօր»,- պատմում է ծնողը:

«Մանկապարտեզում անհարմար միջավայր էր, բայց խնդիրը, կարծում եմ, օբյեկտիվ էր: Աշխատողները չեն կարող շփվել խոսքի զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հետ, քանի որ վերապատրաստված չեն եւ շատ չեն աշխատել նման երեխաների հետ: Դրա համար էլ նրանք չեն ուզում աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ եւ վերաբերմունքով ցույց են տալիս, որ ԿԱՊԿՈՒ երեխաների համար կան զարգացման, վերականգնողական կենտրոններ: Մենք եւս նման վերաբերմունքը հաշվի առնելով՝ նախընտրեցինք վերականգնողական եւ զարգացման կենտրոնը»,- ավելացնում է մյուս ծնողը:

Մյուս խնդիրը, որի մասին բարձրաձայնում են ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները, կապված են հավելյալ ծախսերի հետ՝ տրանսպորտ, տեղափոխում, սնունդ, դեղորայք եւ այլն:

«Շաբաթական մի քանի անգամ երեխային տանում եմ վերականգնողական կենտրոն, իհարկե, ստիպված, քանի որ մանկապարտեզում չեն կարող մատուցել անհրաժեշտ ծառայությունները: Այդ պատճառով առաջ են գալիս հավելյալ ծախսեր՝ տեղափոխում, տրանսպորտ»,- ասում է կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ծնողը:

Ներառական կրթության ընկալումները նախադպրոցական ուսումնական հաստատություններում (Գյումրի)

Նախադպրոցական տարիքի եւ կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների մեծ մասը թերի է տեղեկացված ներառական կրթության էության, նպատակների մասին: Հենց սրանով է պայմանավորված կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների ծնողների բացասական վերաբերմունքը. նրանք կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին փորձում են հեռու պահել իրենց երեխաներին եւ չեն ընդունում ներառականության քայլերը, պահանջում են կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը կազմակերպել հատուկ մանկապարտեզներում եւ նախակրթարաններում: Ներառական կրթության դասընթացներին մասնակցելու անհրաժեշտություն տեսնում են ոչ միայն ԿԱՊԿՈՒ, այլեւ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները:

«Ընդունում ենք, որ զարգացման խնդիրներ ունեցող երեխաները պետք է ունենան հավասար պայմաններ եւ օգտվեն հավասար հնարավորություններից, սակայն Հայաստանում, կարծես, հաշվի չեն առնում զարգացման խնդիրներ չունեցող երեխաների ու վերջիններիս ծնողների, օրինական ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները: Ես իմ որդուն համոզելով էի տանում նախակրթարան, նրանց խմբում կար մտավոր հետամնացություն եւ խոսքի խանգարում ունեցող երեխա, որի հետ ոչ մի մանկավարժ ու դաստիարակ ի վիճակի չէր աշխատել: Հետեւանքում տուժեց իմ որդու եւ եւս մի քանի տասնյակ երեխաների կրթություն ստանալու իրավունքը, որովհետեւ բոլորի ուշադրությունը այդ երեխան էր գրավում՝ իր քայլերով ու շարժումներով: Ես դեմ եմ Հայաստանում ներառական կրթության ներդրմանը, հասկապես նախադպրոցական ուսումնական հաստատություններում», - ասում է ծնողը:

«Ես չար մարդ չեմ, բայց համաձայն չեմ ներառական կրթության ծրագրի ներդրմանը: Ջարգացման խնդիրներ ունեցող երեխան եւ վերջինիս ծնողն ամբողջ տարվա ընթացքում խանգարել են մեր երեխաների կրթության կազմակերպման գործին: Ես դասին ներկա եմ եղել, տեսել, թե ինչպես է այդ երեխան անկատավարելի դառնում մանկավարժի ներկայությամբ: Այդ երեխայի պատճառով 2-3 երեխա դուրս է գալու, իսկ մյուսները չեն կարողացել պատշաճ յուրացնել դասը: Տնօրենին բողոքեցինք, նա ժողով արեց, ու ասաց, որ պետք է ընդունեք դա, չի կարելի երեխաներին տարանջատել, բոլորն ունեն հավասար պայմաններ», - նշում է մյուս ծնողը:

«Երբ առաջին անգամ խոսքի զարգացման խնդիրներ ունեցող երեխա էր ընդունվել որդուս նախակրթարան, վերաբերմունքի փոփոխություն նկատեցի: Իմ որդին մեկ շաբաթից ավել նախակրթարան չէր ուզում գնալ, պատմում էր, որ ձայներ հանող երեխայից վախենում է: Այդ ընթացքում մեր մանկապարտեզը չունեի հոգեբան, ես ստիպված եղա որդուս տանել հոգեբանի մոտ: 5-ամյա որդուս հետ հոգեբանը շաբաթական 3 անգամ հանդիպեց, հոգեբանորեն նրան պատրաստեց խոսքի զարգացման խնդիրներ ունեցող երեխայի հետ շփման եւ հաղորդակցման: Նա մի ֆիլմ էր առաջարկել, որ դիտեինք, հետո նկարագրող գիրք, որդիս մեկ-երկու շաբաթում կարողացավ հաղթահարել այդ հոգեբանական բարդույթը: Կարծում եմ՝ ներառական կրթությունը մեզ համար

հարկավոր է, սակայն պետք է հոգեբանորեն այդ ամենին պատրաստել նաև ոչ ԳԱՊԿՈՒ երեխաներին եւ վերջիններիս ծնողներին, որը չի արվում ոչ միայն մեր մանկապարտեզում, այլև ամբողջ Հայաստանում, մինչդեռ Եվրոպայում, իմ տեղեկություններով, ներառական կրթության դասընթացներին բոլոր երեխաներն ու ծնողներն են մասնակցում», -

ավելացնում է 3-րդ ծնողը:

Իհարկե, այս մասով կան նաև բացառություններ, երբ ծնողն ինքն է շահագրգռված, որ երեխան նախադպրոցական տարիքից շփվի, հաղորդակցվի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ: Ծնողները միաժամանակ նշում են, որ առկա խնդիրները լուծելու համար հարկավոր է հոգեբանի, անհրաժեշտ մասնագետի ներկայություն:

«Ես միշտ ցանկացել եմ, որ իմ երեխան շփվի զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հետ, հասկանա, որ կյանքում պիտի հանդիպի նաև նման մարդկանց: Երբ առաջին անգամ խմբում ընդունեցին հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխայի, որդիս լացելով վերադարձավ եւ հրաժարվեց այլևս մանկապարտեզ հաճախել: 5 տարեկան երեխայի հետ պետք է աշխատի հոգեբան, որպեսզի հասկանա նման երեխաներին, ընդունի նրանց, այնինչ մենք մանկա-պարտեզում չունենինք հոգեբան: Ես երեխայիս տեղավոխել եմ այլ հաստատություն», - պատմում է ծնողը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Գյումրիում կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողները տեղեկացված չեն, նաև իրենց իրավունքների պաշտպանության մեխանիզմներին չեն տիրապետում:

«Մի քանի անգամ նկատել եմ, որ երեխայիս նկատմամբ դաստիարակն ունի տարբերվող վերաբերմունք, ի ցույց է դնում խղճահարություն: Դա նկատել են նաև մյուս ծնողները եւ ինձ հասկացնում են, որ երեխայիս տեղափոխեմ հատուկ դպրոց: Ասում են, որ իրենց երեխաները իմ երեխային հաճախ են տանը ընդօրինակում, շարժում են անում, ծաղրում: Ես այդ ամենը փոխանցել եմ տնօրենին, բայց մի քանի օր անց նորից նույնն է կրկնվել: Դրա համար ես էլ, երեխաս էլ միշտ կաշկանդված եմ», - պատմում է ծնողը:

«Մի անգամ տնօրենն ինձ ասաց. «Գիտե՞ս, ես արդեն հոգնել եմ խմբի երեխաների ծնողներին համոզել, որ քո երեխան նույն խմբում սովորի: Լավ կլինի, մի աջակցության կենտրոն գտնես, որտեղ երեխայիդ հոգեբանական ճնշման չեն ենթարկի», - պատմում է մյուս ծնողը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողները «յուրահատուկ վերաբերմունք» են ցուցաբերում կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ: Նման վերաբերմունք ունեն նաև կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաները: Այնինչ, ներառական կրթության համակարգում չպետք է տեղ գտնեն զգացմունքայնությունն ու տարբերվող վերաբերմունքը:

«Տեսողական խնդիրներ ունեցող երեխային ոչ մի մանկապարտեզում չէին ընդունել, աշխատակցիները վախեցել էին, պայմաններ ու մասնագետներ չեն ունեցել, մեր մանկապարտեզը նրան ընդունեց եւ նա շատ հեշտությամբ ինտեգրվեց: Շարժողական խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ շատ հոգատար են մյուս երեխաները, հերթ էին կանգնում, թե ով է դայակի հետ այդ երեխային տանելու հիգիենիկ սենյակ: Դա շատ մեծ առավելություն է փոքր հասակից», - ասում է մանկավարժ Շուշան Ստեփանյանը:

«Հասակակից երեխաները կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմաններ կարիք

ունեցող երեխաների նկատմամբ կարեկցող են, օգնող, աջակից, սա բոլորս տեսնում ենք»,- ասում է մանկավարժ Սյուզան Հարությունյանը:

«Մեր երեխաների մոտ առաջացել է գթասրտություն: Առաջին օրերին մանկասայլակով հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաներին տեսնելիս զարմանում էին, հետո սկսեցին հոգատարությամբ ընդունել: Բայց մեզ համար կարևոր է նաև, թե ինչպես է մասնագետն աշխատում մեր երեխայի հետ: Որոշ դեպքերում, այո, թերացում կա, մենք դա շտկած ենք ուզում տեսնել: Հոգատարությունն ու գթասրտությունն այս դեպքերում անհրաժեշտ չեն, մեզ հավասար վերաբերմունք է հարկավոր» ,- ավելացնում է ծնողը:

Մանկավարժների դիտարկումները

10 մանկավարժի հետ անցկացրած հարցազրույցների ընթացքում պարզվել է, որ երեքից մեկը համաձայն չէ նախադպրոցական կրթության համակարգում համընդհանուր ներառա-կանության ներդրմանը: Պատճառները տարբեր են՝

1. համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունները չունեն մասնագիտական թիմեր, պայմաններ, ներառական կրթության վերաբերյալ տեղեկատուներ, նյութեր

2. Հայաստանում դեռևս տիրում է կարծրատիպային մտածողություն եւ ծնողները խուսափում են զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին ուղարկել նախակրթարաններ ու մանկապարտեզներ:

Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները կրթական գործընթացին մասնակցելիս կաշկանդվում են. կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների ծնողների մի մասը կարծում է, որ ներառական կրթության դեպքում տուժում է իրենց երեխաների կրթությունը:

«Պետք է ապահովել հավասար պայմաններ եւ ստեղծել հավասար հնարավորություններ բոլորի համար, որը ներկայում դժվար է, հատկապես, երբ նախադպրոցական ուսումնական հաստատության խմբում երեխաների թվաքանակը 30 է: Կարծում եմ՝ դաստիարակի կողքին պետք է լինի մասնագիտական թիմ, որն այսօր մանկապարտեզը չունի: Լիարժեք պայմաններ են անհրաժեշտ: Տարբեր խառնվածքների ԿԱՊԿՈՒ երեխաներ կան, որոնց հետ աշխատելու համար անհրաժեշտ է անհատական մոտեցում: Երեխաների մի մասը ԿԱՊԿՈՒ երեխաներին աջակցում է, օգնում, մյուսները՝ ոչ: Այստեղ պետք է օգնության հասնի ընտանիքի աջակցությունը, ընտանիքը եւս պետք է երեխային պատրաստի նախակրթարաններում, մանկապարտեզներում կրթություն ստացող ԿԱՊԿՈՒ երեխաների հետ շփման ընթացքում, սակայն ընտանիքն այս մասով մեզ աջակից չէ, միայն պահանջում է»,- ասում է մանկավարժ Սոնիկ Մարգարյանը:

11 համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենից 5-ը հարցումների ընթացքում պատասխանել է, որ երբեւէ բողոք չի ունեցել ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներից, 4-ը պատասխանել է, որ եղել են բողոքներ, սակայն դրանք ժողովների ընթացքում հարթվել են, 2-ը պատասխանել է, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները թաքցնում են երեխաների խնդիրները, իսկ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները չեն ցանկանում, որ ուսուցումը լինի համատեղ:

Հարցված դաստիարակները տարբեր տեղեկություններ են հայտնել ոչ ԿԱՊԿՈՒ եւ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների բողոքների վերաբերյալ: Մի մասը տեղեկացրել է, որ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներից չի ստացել բողոք ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ վերաբերմունքից, իսկ մյուս մասը

պատասխանել է, որ եղած խնդիրները հարթել են ժողովների ընթացքում: ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները գրույցներում նշել են, որ հիմնականում փորձում են թաքցնել նման խնդիրները եւ չբարձրաձայնել ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների բացասական վերաբերմունքի մասին:

Հարցված 33 ծնողների որոշ մասը ցանկություն չի հայտնել՝ պատասխանելու, թե ինչպիսի բողոքներ ունեն ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները: Մյուս 22 ծնողները տարբեր գնահատականներ է տվել:

Վերապատրաստման դասընթացների կարելիությունը

ՀՀ կառավարության 2016 թվականի N 1058-Ն որոշմամբ⁷ հաստատվել է Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները: Ըստ այս կանոնադրությունների, հանրապետական և տարածքային կենտրոնները կարող են մշակել և հրատարակել ուսումնական և մեթոդական գրականություն. ստեղծել դիդակտիկ նյութեր և պարագաներ: Հանրապետական կենտրոնը կարող է նաև պետական ծրագրով չնախատեսված վերապատրաստումներ կազմակերպել և անցկացնել:

Ծրագրի ընթացքում պարզ է դարձել, որ հարցմանը մասնակցած տնօրենները, դաստիարակներն ու ծնողները դեռևս պետականորեն չեն վերապատրաստվել: Միայն մի մասը մասնակցել է միջազգային կազմակերպությունների կազմակերպած վերապատրաստման դասընթացների: Սակայն ակնհայտ է, որ ներառական կրթության համակարգի ներդնումը պահանջում է վերապատրաստումների ծրագիրը, որը եւ պետք է լինի տեւական:

«Որպես մասնագետ՝ տեսնում եմ վերապատրաստումների բացթողում, որն ընդհանուր է թե ծնողների, թե հաստատության աշխատակազմի համար: Մասնագետները չգիտեն՝ ինչ անել, ինչ մեթոդներով աշխատել երեխաների հետ, նույնը ծնողների մասով կա բացթողում. ծնողներն ունեն նաև մտավախություն, թե ինչպես կվերաբերվեն մյուս երեխաներն իրենց երեխաներին, ինչ տեղի կունենա: Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներն ունեն բարդույթներ: Կողմերի հետ երկուստեք աշխատանք պետք է տարվի: Մենք ներառական կրթության կողմնակից ենք, սակայն շատ բացթողումներ ունենք, սկսած պայմաններից: Անհրաժեշտ էր իրազեկման լայն աշխատանքներ կատարել եւ, իհարկե, անցկացնել վերապատրաստման դասընթացներ: Կողմերը գործիքակազմի կիրառման մասով ռտաբորիկ են»,- ասում է հոգեբան Քրիստինա Բաղդասարյանը:

Ծրագրի շրջանակում ընտրված 11 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենից 4-ը պատասխանել է, որ երբեւէ չի մասնակցել ներառական կրթության դասընթացների: Մյուս 7 տնօրեններից 2-ը պատասխանել է, որ դասընթացի ընթացքում գրեթե ոչինչ չի սովորել, մյուս երկուսը պատասխանել է, որ ստացել է «փորձի փոխանակում, գիտելիքի համադրում», իսկ երեք՝ «ԿԱՊԿՈՒ երեխաների հետ վարվեցողության կանոններ, կիրառվող մեթոդներ»:

8 տնօրեն հարցման ընթացքում պատասխանել է, որ ներառական կրթության վերաբերյալ վերապատրաստման կազմակերպումը թերի է, 2-ը՝ «շատ բարձր մակարդակով է կազմա-կերպվում», իսկ 1-ը՝ «շատ վատ է եւ թանկարժեք»: 11 տնօրենն պատասխանել է, որ ուզում է մասնակցել

⁷ <https://cutt.ly/ehSLZm4>

ներառական կրթության վերաբերյալ վերապատրաստման դասընթացների՝ գիտելիքներ ձեռք բերելու, մեթոդներին տիրապետելու նպատակով:

Դաստիարակների պատասխանները

Հարցված 33 դաստիարակից 21-ը պատասխանել է, որ մասնակցել է ներառական կրթության վերաբերյալ դասընթացին, իսկ մյուս 12-ը՝ ոչ: 27-ը «լավ» է գնահատել ներառական կրթության վերաբերյալ վերապատրաստումը, «գերազանց»՝ 2-ը, «բավարար»՝ 2 հոգի, «անհրաժեշտ»՝ 2 հոգի: 33 դաստիարակից 30-ը ցանկություն է հայտնել մասնակցել ներառական կրթության դասընթացին, գիտելիքներ, փորձ ստանալու նպատակով, մյուս 3-ը՝ ցանկություն չի ունեցել մասնակցել: Հայտնել են, որ ստացած գիտելիքները բավարար են:

Ծնողների պատասխանները

Հարցված 33 ծնողից 29-ը պատասխանել է, որ երբեւէ չի մասնակցել ներառական կրթության վերաբերյալ դասընթացների, 1 ծնող չի ցանկացել այդ հարցին պատասխանել, 3 ծնող հաստատել է, որ մասնակցել է դասընթացի: Նրանք պատասխանել են, որ դասընթացի ընթացքում սովորել են ընդհանուր գիտելիքներ:

Հարցված ծնողներից 29-ը պատասխանել է, որ ցանկանում է մասնակցել ներառական կրթության վերաբերյալ դասընթացների, մյուս 4-ը չի ցանկացել այդ հարցին պատասխանել:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆիզիկական հարմարեցվածությունը, նյութատեխնիկական հագեցվածությունն ու մեթոդական ռեսուրսները:

Հետազոտության ընթացքում Գյումրու համայնքային 11 նախադպրոցական ուսումնական հաստատություններում կատարել են նաեւ դիտարկումներ:

Արդյունքները ներկայացվում են աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 1

N	ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԱԴՂՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ 11 ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՅՈ	ՈՉ	ՄԱՍԱՄԲ
1	Մուտքի մոտ կա՞ արդյոք թեքահարթակ:	3	8	0
2	Թեքահարթակի կողքին կա՞ արդյոք բազրիք:	0	11	0
3	Հաստատության հարկերի միջեւ կա՞ թեքահարթակ:	0	11	0
4	Մանհանգույցները հարմարեցվա՞ծ են հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների կարիքներին:	0	11	0
5	Արդյո՞ք հաստատության զուգարանների դուռը լավ՞ չէ է (90սմ) սայլակների համար:	4	5	2
6	Արդյո՞ք հաստատության զուգարանի դռան շեմը հա՞րթ է:	8	2	1

7	Հաստատությունն ունի՞ արդյոք ներառական կրթության մասին իրազեկող նյութեր:	2	7	2
---	---	---	---	---

8	Հաստատությունն ունի՞ արդյոք ներառական կրթության մասին նյութեր:	2	3	6
9	Արդյո՞ք հաստատության աշխատակազմն ունի անհրաժեշտ պարագաներ ու դիդակտիկ նյութեր:	1	0	10

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆիզիկական թերհագեցվածությունը, շենքային, մեթոդական ռեսուրսների անբավարար պայմանները հարցվողների գերակշիռ մասը բացատրել են նախադպրոցական կրթական համակարգում ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող երեխաների բացակայությամբ: Արձանագրվել է, որ ուսումնական հաստատություններն առկա ռեսուրսներով պատրաստ չեն ներառական կրթության համընդհանուր համակարգի ներդրմանը:

Դիտարկումների ընթացքում պարզվել է, որ 11 հաստատությունից 8-ի մուտքի մոտ չկա թեքահարթակ: 11 նախադպրոցական ուսումնական հաստատության թեքահարթակի կողքին չի եղել բազրիք, հաստատությունների հարկերի միջև չեն եղել թեքահարթակներ, ոչ մի հաստատության սանհանգույց հարմարեցված չի եղել հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների կարիքներին:

4 հաստատության գուգարանների դուռը լայն է եղել (90 սմ) սայլակների համար, 5-ում պահանջը չի պահպանվել, իսկ 2-ում՝ մասամբ:

8 հաստատության գուգարանի դռան շեմը եղել է հարթ, 2-ում չեն եղել հարթ, իսկ 1-ում՝ մասամբ:

6 ուսումնական հաստատությունում ներառական կրթության մասին նյութերը մասամբ են եղել, 3-ում դրանք չեն եղել, իսկ 2-ում ամբողջովին են եղել:

11 հաստատությունից 10-ում աշխատակազմը մասամբ է ունեցել անհրաժեշտ պարագաներ ու դիդակտիկ նյութերը, իսկ 1-ը՝ ամբողջովին:

11 հաստատությունից 8-ում են միայն առկա եղել ծնողների, հաստատության աշխատակազմի հետ համագործակցության փաստաթղթեր: Այդ հաստատությունից 2-ում առկա են եղել ծնողների եւ հաստատության միջև կնքված պայմանագրեր, իսկ 6-ում՝ արձանագրություններ, ծնողական անկյուններ:

11 հաստատությունից 4-ում չեն եղել փաստաթղթեր, որոնք կվկայեին մեկ խմբում ներառական եւ ընդհանուր կրթական գործընթացի մեկտեղման մասին: 6-ում եղել են բժշկական քարտեր՝ N26, իսկ 1-ում՝ հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ:

Ծրագրի ընթացքում ընտրված Գյումրու 11 նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններ մասնակցել են հարցման:

11 տնօրենների պատասխանները՝ ըստ առանձին հարցերի, ներկայացնում ենք աղյուսակների

տեսքով (Տես աղյուսակ 2: աղյուսակ 2.1.: աղյուսակ 2.2.)

ԿԱՊԿՈՒ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆԴՊՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 2.

N	ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ	11 ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ
1	Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քանի՞ երեխայի հետ եք աշխատել մինչեւ այսօր:	257 երեխա
2	Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քանի՞ երեխա է սովորում հաստատությունում:	44
3	Այդ երեխաներից քանի՞սն ունի հաշմանդամություն:	4
4	Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները ո՞ր ֆունկցիայի խանգարումներն ունեն:	խոսքի խանգարում -16 լսողության խանգարում -1 տեսողության խանգարում -2 մտավոր հետամնաց. ունեցող - 3 հենաշարժողական համակարգի խախտումներ -4 հոգեբանական զարգացման խնդիրներ-3 վարքային եւ հուզականային ոլորտի խանգարումներ -7 հոգեբանական զարգ. խնդ. և վարքային հուզ. խնդիր-1 խոսքի զարգ.,վարքային և հուզակ. ոլորտի խնդիր-1 խոսքի,հոգեբանական զարգ. խնդ.,վարքի և հուզականային -6

Ներառական կրթության վերապատրաստման անհրաժեշտությունն ու մասնագետների խնդիրը
Աղյուսակ 2.1.

N	ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ	11 ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ
1	Բավարա՞ր եք գնահատում մասնագետների թիվը:	այո-6 ոչ-5

2	Լրացուցիչ մասնագետի կարգի զգացվում է:	այո-10 ոչ-1
3	Ո՞ր մասնագետի կարիքն էք զգում:	լոգոպեդ, հոգեբան, սոցիալական մանկավարժ-2 լոգոպեդ, հոգեբան, հատուկ մանկավարժ-3 հոգեբան, լոգոպեդ-3 հոգեբան-1 հոգեբան, լեզուաբան, սուրբոմանկավարժ-1 մասնագետի կարիք չկա-1
4	Ինչպե՞ս էք գնահատում ներառական կրթության վերապատրաստման կազմակերպումը:	բարձր մակարդակով է կատարվում-2 շատ թերի է, չեն վերապատրաստվում-8 շատ վատ է և թանկ է-1
5	Երբեւէ մասնակցել ե՞ք ներառական կրթության դասընթացներին:	այո-7 ոչ-4
6	Ի՞նչ էք սովորել դասընթացի ընթացքում, խնդրում եմ հակիրճ ներկայացնել:	գրեթե ոչինչ-6 փորձի փոխանակում, գիտելիքների համադրում-2 ԿԱՊԿՈՒ երեխաների հետ վարվեցողության կանոններ, կիրառվելիք մեթոդներ, անհրաժեշտ պարագաներ-3
7	Ուզո՞ւմ եք մասնակցել ներառական կրթության վերապատրաստման դասընթացների, խնդրում եմ հիմնավորել ցանկությունը:	այո, գիտելիքներ ձեռք բերելու, կիրառվելիք մեթոդներին տիրապետելու համար-10 այո, պահանջարկ կա-1
8	Ինչպե՞ս էք գնահատում ներառական կրթության վերապատրաստման կազմակերպումը:	շատ բարձր մակարդակով է կատարվում-2 շատ թերի է, չեն վերապատրաստվում-8 շատ վատ է և թանկարժեք է-1

Հաստատություններում առկա խնդիրներն ու ներառականության ընկալումը

Աղյուսակ 2.2.

N	ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՅԵՐ	11 ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ
1	Ինչպիսի՞ պարագաների, նյութերի կարիք ունեն ԿԱՊԿՈՒ երեխաները, որոնք ձեր հաստատությունը չի կարող տրամադրել:	դիդակտիկ նյութեր , զարգացնող խաղեր-6 ներառական կրթության մասին իրազեկող ձեռնարկներ, աուդիովիդեո ձայնագրություններ, էլեկտրոնային ավագ-

		5
2	Ինչպիսի խնդիրներ եք նկատում հաստատությունում, որն է ձեր մտահոգությունը:	շենքային պայմանները չեն համապատասխանում ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին-9 դիդակտիկ պարագաներ և հասուկ մասնագետներ չկան-2
3	Ինչպե՞ս եք գնահատում կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների եւ նրանց ծնողների վերաբերմունքը կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ:	11 համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենից 5-ը հարցումների ընթացքում պատասխանել է, որ երբեւէ բողոք չեն ունեցել ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներից, 4-ը պատասխանել է, որ եղել են բողոքներ, սակայն դրանք ժողովների ընթացքում հարթվել են, 2-ը պատասխանել են, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները թաքցնում են երեխաների խնդիրները, իսկ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները չեն ցանկանում, որ ուսուցումը լինի համատեղ:

11 հաստատության տնօրենից 7-ը պատասխանել է, որ շենքային պայմանները չեն համապատասխանում ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին, իսկ 4-ը պատասխանել է՝ մասամբ: 11 տնօրենից 6-ը պատասխանել է, որ ԿԱՊԿՈՒ երեխաներին հաստատությունը չի կարող բավարարել դիդակտիկ նյութերով ու զարգացնող խաղերով, իսկ 5-ը պատասխանել է, որ հաստատությունը չի կարող տրամադրել ներառական կրթության մասին իրազեկող ձեռնարկներ, աուդիո-վիդեո ձայնագրություններ:

11 տնօրենից 7-ը պատասխանել է, որ կրթական ծրագրերի հարմարեցվածությունը ԿԱՊԿՈՒ երեխաների առանձնահատուկություններին, շատ թերի է իսկ 4-ը պատասխանել է «բարձր է, հաշվի է առնվել տարիքային առանձնահատկությունը»: Հարցին, թե ինչպես եք գնահատում կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածությունը դասին, հարցված 11 տնօրենից 9 պատասխանել է՝ «միջին ընդգրկվածություն ունի», իսկ 2-ը՝ «լիովին»: Հարցված 11 տնօրենից 10-ը պատասխանել է, որ կրթական գործընթացի ընթացքում ԿԱՊԿՈՒ երեխաներն ունենում են հարմարվելու խնդիր, անտարբեր են, չափազանց ակտիվ, եւ 1-ը նշել է սնվելու հետ կապված խնդիրը: Նշված խնդիրները կարգավորելու համար տնօրեններն առաջարկել են ունենալ մասնագիտական թիմ եւ ծնողների հետ տանել բացատրական աշխատանքներ:

Մրազրի ընթացքում ընտրված Գյումրու 11 նախադպրոցական ուսումնական հաստատությունների 33 դաստիարակներ մասնակցել են հարցման:

33 դաստիարակների պատասխանները՝ ըստ առանձին հարցերի, ներկայացնում ենք աղյուսակների տեսքով (Տես աղյուսակ 3: 3.1.)

ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածությունն ու ծնողների մասնակցությունը

Աղյուսակ 3.

N	ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏՏԻԱՐԱԿՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ	33 ԴՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ
1	Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քանի՞ երեխայի հետ եք աշխատել մինչեւ այսօր:	մոտավորապես 171 երեխա (ԿԱՊԿՈՒ երեխայի հետ մինչ այսօր չի աշխատել 4 դաստիարակ)
2	Ի՞նչ մասնագետներ են աշխատում:	մանկավարժ, մեթոդիստ, դաստիարակ
3	Ըստ Ձեզ, ի՞նչ մասնագետներ կարող են աշխատել կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հետ:	հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ սոցիալական աշխատող, էրկոթերապիստ
4	Ինչպե՞ս եք գնահատում կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների եւ նրանց ծնողների վերաբերմունքը կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ:	չի դժգոհել՝ 16 դժգոհում են՝ 17
5	Ինչպե՞ս կգնահատեք կրթական ծրագրերի հարմարեցվածությունը կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատկություններին:	բարդ՝ 19 հեշտ, հասանելի՝ 8 բավարար՝ 2 հոգի մասամբ՝ 4 (կախված երեխայի զարգացման խնդրից)
6	Ինչպե՞ս եք գնահատում ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածությունը կրթական գործընթացներում:	լավ՝ 21 չեն ընդգրկվում՝ 5 մասամբ՝ 6 խմբում նման երեխա չկա՝ 1

7	1-10 միավորային սանդղակով գնահատել ծնողի մասնակցությունը ներառական կրթության իրակա-նացման գործում:	1-4 միավոր՝ 10 պատասխան 5-6 միավոր՝ 11 պատասխան 7-10 միավոր՝ 7 պատասխան ԿԱՊԿՈՒ երեխա չեն ունեցել 5 ՆՈՒՀ
8	Երբեւէ մասնակցել ե՞ք ներառական կրթության դասընթացներին:	այո՝ 21 ոչ՝ 12
9	Ուզո՞ւմ եք մասնակցել ներառական կրթության վերապատրաստման դասընթացների, խնդրում եմ	ցանկություն է հայտնել մասնակցել ներառական կրթության դասընթացին,

	հիմնավորել ցանկությունը:	գիտելիքներ, փորձ ստանալու նպատակով՝ 30 Ցանկություն չի ունեցել մասնակցել, հայտնել են, որ ստացած գիտելիքները բավարար են՝ 3
--	--------------------------	--

Առկա խնդիրներն ու մտահոգությունները

Աղյուսակ 3.1.

N	ԳՑՈՒՄԴՈՒ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ	33 ԴԱՍԻԱՐԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ
1	Ինչպիսի՞ պարագաների, նյութերի կարիք ունեն կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները, որոնք ձեր հաստատությունը չի կարող տրամադրել:	դիդակտիկ պարագաներ՝ 29 մասնագիտական տեխնիկաներ՝ 1 չգիտեմ՝ 3
2	Հաստատության ֆիզիկական կարողությունները համապատասխանո՞ւմ են կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կարիքներին ու պահանջներին:	ոչ՝ 6 մասամբ՝ 27
3	Ինչպիսի՞ խնդիրներ եք նկատում հաստատությունում, ո՞րն է ձեր մտահոգությունը:	շենքային պայմանների եւ կադրային հագեցվածության խնդիր՝ 10 միայն շենքային պայմանների՝ 8 կադրային հագեցվածության, շենքային պայմանների, դիդակտիկ պարագաների՝ 5 պետական աջակցության, վառելիքի խնդիր՝ 1 կադրային հագեցվածության՝ 2 կադրային հագեցվածության եւ դիդակտիկ պարագաների՝ 2 դիդակտիկ պարագաների ու շենքային պայմանների՝ 5

4	ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներից ստացել՞ էք բողոքներ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ:	ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներից չի ստացել բողոք ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ վերաբերմունքից՝ 16 Խնդիրները հարթել են ժողովների ընթացքում՝ 17
---	---	---

Հարցումների ընթացքում 33 դաստիարակից 27-ը պատասխանել է, որ հաստատության ֆիզիկական կարողությունները մասամբ են համապատասխանում ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին ու պահանջներին, 6-ը պատասխանել է, որ չեն համապատասխանում:

Դաստիարակներից 29-ը պատասխանել է, որ հաստատությունը չունի դիդակտիկ պարագաներ ԿԱՊԿՈՒ երեխաների համար, 1 հոգի նշել է մասնագիտական տեխնիկաների բացակայության խնդրի մասին, մյուս 3-ը տեղյակ չեն եղել, թե ինչի պակաս ունեն ԿԱՊԿՈՒ երեխաներն իրենց հաստատությունում: 19 դաստիարակ պատասխանել է, որ կրթական ծրագրերի հարմարեցվածությունը բարդ է ԿԱՊԿՈՒ երեխաների համար, 8-ը՝ «հեշտ», 2-ը՝ «բավարար», 4-ը՝ «մասամբ»: 21 դաստիարակ պատասխանել է, որ ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածությունը «լավ է» կրթական գործընթացներում, 5-ը պատասխանել են, որ չեն ընդգրկվում, 6-ը՝ «մասամբ» 1-ը՝ «խմբում նման երեխա չկա»:

Դաստիարակները նշել են, որ ներառական կրթության կազմակերպման ընթացքում ԿԱՊԿՈՒ երեխաների մոտ նկատել է չենթարկվելու խնդիր, անուշադրություն, ագրեսիվ վարք: Դաստիարակներից 8-ը պատասխանել է, որ այդ խնդիրները կարելի է հարթել մասնագիտական միջամտության շնորհիվ, 25-ը՝ հոգատար վերաբերմունքի միջոցով:

Ծրագրի ընթացքում ընտրված Գյումրու 11 նախադպրոցական ուսումնական հաստատությունների 33 ծնողներ մասնակցել են հարցման:

33 ծնողների պատասխանները՝ քստ առանձին հարցերի, ներկայացնում ենք աղյուսակների տեսքով (Տես աղյուսակ 4., աղյուսակ 4.1., աղյուսակ 4.2)

ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածությունը

Աղյուսակ 4

N	ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ	33 ԾՆՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ
1	Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քանի՞ երեխա ունեք:	2 երեխա՝ 3 1 երեխա՝ 27
2	Երեխան ունի՞ հաշմանդամություն:	այո՝ 20 ոչ՝ 13
	Երեխայի ընդունելության ժամանակ խնդիրներ ստեղծվե՞լ են:	այո՝ 3 ոչ՝ 20 մասամբ՝ 10

3	Քանի՞ մասնագետ է աշխատում Ձեր երեխայի հետ/քանի՞ մասնագետ կարող է աշխատել ձեր երեխայի հետ:	հատուկ մասնագետ չկա՝ 10 կարող է աշխատել 2-ից 3 մասնագետ (հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ)՝ 23
4	Երբեւէ մասնակցել ե՞ք ներառական կրթության վերաբերյալ դասընթացների:	այո՝ 3 ոչ՝ 19

		չի ցանկացել պատասխանել՝ 11
5	Ուզո՞ւմ եք մասնակցել ներառական կրթության վերապատրաստման դասընթացների, խնդրում եմ հիմնավորել ցանկությունը:	այո՝ 29 չի ցանկացել պատասխանել՝ 4

Ծնողների գնահատականը

Աղյուսակ 4.1.

N	ԳՅՈՒՄՐՈՒՆ ԱՄԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ	33 ԾՆՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ
1	Ինչպե՞ս եք գնահատում ներառական կրթության կազմակերպումը տվյալ կրթական հաստատությունում եւ Գյումրիում:	շատ լավ՝ 15 վատ՝ 8 չի ցանկացել պատասխանել՝ 10
2	Խնդրում եմ 1-10 միավորային սանդղակով գնահատել ձեր երեխայի հետ աշխատող մասնագետի աշխատանքը:	6-10 միավոր՝ 26 չի ցանկացել պատասխանել՝ 7
3	Ինչպե՞ս եք գնահատում կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների եւ նրանց ծնողների վերաբերմունքը ձեր երեխաների նկատմամբ:	դժգոհություններ եղել են՝ 9 լավ են վերաբերվում՝ 11 սովորական են վերաբերվում՝ 1 չցանկացավ պատասխանել՝ 12
4	Ինչպե՞ս եք գնահատում կրթական ծրագրերի հարմարվածությունը ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին:	հեշտ՝ 15 բարդ՝ 9 չի ցանկացել պատասխանել՝ 9

Խնդիրներ եւ մտահոգություններ

Աղյուսակ 4.2.

N	ԳՅՈՒՄՐՈՒՆ ԱՄԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐ	33 ԾՆՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ
---	--	-----------------------------------

1	Բնչպիսի՞ պարագաների, նյութերի կարիք ունի ձեր երեխան, որը չի կարող տրամադրել նաև հաստատությունը:	<p>դիդակտիկ պարագաներ՝ 15 հոգի</p> <p>ոչնչի կարիք չկա, այն, ինչ կա, բավական է՝ 6</p> <p>դելֆինաթերապիա՝ 4</p> <p>չի ցանկացել պատասխանել՝ 8</p>
2	Բնչպիսի՞ խնդիրներ եք նկատում հաստատությունում, ո՞րն է ձեր մտահոգությունը:	<p>կադրային հազեցվածություն, շենքային պայմաններ, դիդակտիկ պարագաներ՝ 5</p> <p>շենքային պայմաններ՝ 8</p> <p>շենքային պայմաններ, կադրային հազեցվածություն՝ 10 հոգ պետության աջակցության բացակայություն, վառելիքի խնդիր՝ 1</p> <p>կադրային հազեցվածություն, դիդակտիկ պարագաներ՝ 2</p> <p>կադրային հազեցվածություն՝ 2</p> <p>շենքային պայմաններ, դիդակտիկ պարագաներ՝ 5</p>
3	Կրթության կազմակերպման ընթացքում ինչպիսի՞ խնդիրներ եք նկատում երեխայի մոտ:	<p>երեխայի մոտ կա հուզակամային խնդիր՝ 11</p> <p>իմացական ոլորտ՝ 7</p> <p>չի ցանկացել պատասխանել՝ 9</p> <p>խնդիրներ չեն եղել՝ 6</p>

Հարցված 33 ծնողից 15-ը պատասխանել է, որ հաստատության ֆիզիկական կարողությունները համապարատասխանում են երեխայի կարիքներին ու պահանջներին, 14-ը՝ պատասխանել է, որ չի համապատասխանում, 3-ը պատասխանել է՝ մասամբ, իսկ 1-ը չի ցանկացել պատասխանել հարցին:

Ծնողներից 15-ը պատասխանել է, որ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունն ունի դիտակտիկ պարագաների պակաս, 8-ը չի ցանկացել պատասխանել, 6-ը՝ «ոչ մի բանի կարիք չունի», իսկ 4-ը՝ դելֆինաթերապիայի բացակայությունն է նշել:

15 ծնող պատասխանել է, որ կրթական ծրագրերը ԿԱՊԿՈՒ երեխաների համար հեշտ են, 9-ը՝ չի ցանկացել պատասխանել, մյուս 9-ը գնահատել է բարդ:

Կրթության կազմակերպման ընթացքում ծնողներից 11-ը պատասխանել է, որ երեխայի մոտ կա հուզակամային խնդիր, 9-ը՝ չի ցանկացել պատասխանել, 7-ը՝ իմացական ոլորտ, 6-ը՝ խնդիրներ չեն եղել: Նման խնդիրները վերացնելու համար 33 ծնողից 22-ը լուծման տարբերակ նշել է մասնագետների առկայությունը:

Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկումն է, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտումն ու կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանումը: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող, կրթությանն աջակցող

մանկավարժահոգեբանական և այլ օժանդակող ծառայություններ մատուցող կազմակերպությունը Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնն է, որը ուսումնամեթոդական, հոգեբանական եւ մանկավարժական աջակցություն է ցուցաբերում սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին:

Իրավական կարգավորումը

2014 թվականի դեկտեմբերին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի 17.2 հոդվածը սահմանում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

«1. Կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով երեխան կարող է ներկայացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կամ երեխայի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը:

2. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատումը կազմակերպվում է ծնողի (կամ նրա այլ օրինական ներկայացուցչի մասնակցությամբ:

3. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի գնահատումը իրականացվում է երեխայի կենսագործունեության բնական միջավայրում (ընտանիք, ուսումնական հաստատություն և երեխայի շփման այլ միջավայրում)»: ⁸

ՀՀ ԿԳ նախարարի N 370-Ն հրամանով հաստատվել է կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը: Հրամանի 6-րդ մասը սահմանում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

«Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1) երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ,

2) ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը,

3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը»: ⁹

Վկայագրված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է վերագնահատում: Գնահատումը մասնակցային գործընթաց է, որին մասնակցում են՝ երեխան, նրա ծնողը, աջակցության խումբը, երեխայի ուսուցիչները: Գնահատումն

⁸ <https://cutt.ly/QhFgFfE>

⁹ <https://cutt.ly/ehFhOVw>

իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ դպրոցում, մանկապարտեզում, ընտանիքում:

Բացահայտված խնդիր

«Ծնողների մի մասը չի համաձայնում կենտրոնի եզրակացության բովանդակության հետ, չի ուզում ընդունել, որ երեխայի հետ պետք է աշխատել եւ նրա զարգացման խնդիրը լուծել, քայքայ ընթացքում մենք բացահայտել ենք երեխայի մոտ խնդիրն ու հարթել: Մոտ երեք տարի է՝ մենք աշխատում ենք ծնողների հետ, որոնք ունեն կրթության եւ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ: Մեր նպատակն այն է, որ ծնողները չթաքցնեն կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, քանի դեռ երեխան փոքր է, իրենք չեն տեսնում այդ խնդիրը, դժվարությունը, երբ արդեն երեխան նախադպրոցական եւ դպրոցական համակարգում է, ծնողների մոտ արդեն այդ խնդիրը նկատելի է դառնում եւ վերածվում է բարդությի: Այսպիսով, ծնողն ավելի շատ է զգում հոգեբանի կարիք, քան երեխան, ծնողները չեն ուզում, որ շրջապատը տեսնի երեխայի թույլ կողմերը»,- ասում է հոգեբան, մանկավարժ Արմինե Նիկողոսյանը:

Կարիքի գնահատումը համարվում է ներառական կրթության բարդ փուլերից: Ընդհանուր առմամբ, ծնողները նշում են, որ երեխաների գնահատման գործընթացը վերացական է կատարվում: Մի դեպքում նշում են, որ երեխաների զարգացման խնդիրները «թեթեւ» են գնահատվում, մյուս դեպքում «բարդացնում են»:

Ծնողների մասնակցությունը ներառական կրթության կազմակերպման գործընթացում

Իրավական կարգավորումը

«Նախադպրոցական կրթության մասին»¹ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է ծնողների (երեխայի օրինական ներկայացուցիչների) իրավունքները և պարտականությունները:

«1. Ծնողները (երեխայի օրինական ներկայացուցիչները) իրավունք ունեն՝

- դիմելու տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ իրենց երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելու նպատակով,
- մասնակցելու երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի մանկավարժահոգեբանական գնահատմանը,
- ուսումնական հաստատությունից պահանջելու խելամիտ հարմարեցումներ երեխայի՝ մյուսների հետ հավասար հիմունքներով նախադպրոցական կրթության իրավունքն իրացնելու նպատակով,
- մասնակցելու երեխայի անհատական զարգացման և ուսուցման պլանի մշակման»:

Ծրագրի շրջանակում կատարված հարցումների արդյունքներն ու հացազրույցները հաստատում են,

¹ <https://cutt.ly/shFkPcZ>


որ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների գերակշիռ մասը տեղյակ չէ իր իրավունքներից ու պարտականություններից:

Մասնավորապես, վերացական վերաբերմունք ունեն իրենց երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատման նկատմամբ, թյուր կարծիք ունեն այս գործընթացի հանդեպ եւ չգիտեն՝ ինչ է ասված հավասար պայմաններ հասկացությունը:

Հարցված 11 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենից 3-ը պատասխանել է, որ ծնողները մասնակցում են ուսումնական պլանի մշակմանը, իսկ 8-ը պատասխանել է, որ ծնողները չեն մասնակցում ուսումնական պլանի մշակմանը:

Ծնողների մասնակցությունը ուսումնական պլանի մշակմանը՝ ըստ տնօրենների պատասխանների

Պատկեր 1




11 տնօրենից 3-ը 10 միավորով է գնահատել ծնողի մասնակցությունը ներառական կրթության իրականացման գործում, մյուս 3-ը՝ 7 միավոր, 6 միավոր գնահատել է մեկ տնօրեն եւ երկուական

տնօրեններ գնահատել են մինչև 5 միավոր:

Ծնողի մասնակցությունը ներառական կրթության իրականացման գործում՝ ըստ տնօրենների պատասխանների


Պատկեր 2



Հարցված 33 դաստիարակներից 12-ը պատասխանել է, որ ծնողները մասնակցում են անհատական զարգացման եւ ուսուցման պլանի մշակմանը, մյուս 21-ը պատասխանել է, որ չեն մասնակցում պլանի մշակմանը, քանի որ ծնողները ցանկություն չեն հայտնել:

Ծնողների մասնակցությունը անհատական զարգացման եւ ուսուցման պլանի մշակմանը՝ ըստ 33 դաստիարակների պատասխանների


Պատկեր 3



33 ծնողից 32-ը պատասխանել է, որ երեխայի հետ աշխատող մասնագետի հետ հանդիպում է հաճախակի, մեկ ծնող չի ցանկացել պատասխանել:

Ծնողների շփուժը իրենց երեխաների հետ աշխատող մասնագետի հետ


Պատկեր 4



33 ծնողից 29-ը պատասխանել է, որ չի մասնակցում երեխայի անհատական զարգացման եւ ուսուցման պլանի մշակմանը, մյուսները հաստատել են:

Ծնողների գերակշիռ մասը հաստատել է երեխայի անհատական զարգացման եւ ուսուցման պլանի մշակմանը չմասնակցելու փաստը

Պատկեր 5



Ծնողները հարցազրույցների ընթացքում ընդգծել են, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունների պայմաններն իրենց չեն բավարարում եւ ստիպված են երեխաներին միաժամանակ ուղարկել խնամքի, աջակցության վերականգնողական կենտրոններ:

Ուսումնական հաստատությունների ընտրությունն ու առկա դժվարությունները

«Իմ երեխան ընդհանրապես չի կարող խոսել, նրա հետ աջակցության կենտրոնում աշխատում էր լոգոպեդ, իսկ մանկապարտեզներում նման մասնագետ չունեն, ես ստիպված երեխային նորից տանելու եմ աջակցության կենտրոն: Ներառական կրթությունը կա միայն փաստաթղթերով, այն իրականում չի գործում Հայաստանում, մենք բազմաթիվ խնդիրների ենք հանդիպում եւ չենք հարմարվում»,- ասում է ծնողը:

«Ես՝ որպես ծնող, կողմ եմ եղել հատուկ դպրոցների գոյությանը, մենք երեխային բերեցինք նախադպրոցական հաստատություն, որպեսզի կրթությունն այստեղ շարունակի, բայց արդյունք չենք տեսնում, չկան մասնագետներ, չկան պայմաններ, իսկ երեխան չի ուզում շփվել իր հասակակիցների հետ, նկատում է, որ իր շարժումներն ընդօրինակում են: Հայաստանի նախադպրոցական կրթության համակարգում ներառական կրթություն չպիտի ներդրվեր, սա մեր մտածելակերպին չի համապատասխանում»,- ասում է մյուս ծնողը:

«Ես շատ էի ցանկանում, որ իմ երեխայի նախադպրոցական կրթությունը սկսվեր մանկապարտեզից, սակայն այդպես չստացվեց մի քանի պատճառով. այն մանկապարտեզները, որոնք մենք ընտրել էինք Գյումրիում, չունեին ոչ միայն անհրաժեշտ մասնագետներ, այլեւ պայմաններից էին զուրկ: Այդ հաստատությունները չունեին նաեւ ներառական կրթության մասին գրականություն, դիդակտիկ պարագաներ, թեպետ համաձայնում էին մանկապարտեզներում իմ երեխային ընդունել: Ես ընտրեցի աջակցության եւ խնամքի կենտրոն, որից գոհ եմ: Միակ խնդիրը, որը տեսնում եմ ներառական կրթության համակարգում, զարգացման խնդիրներ ունեցող երեխային ծաղրելն է կամ վերջինիս կրկնօրինակելը: Այս խնդիրը մենք չենք տեսել Ռուսաստանում, քանի որ կային հատուկ մասնագետներ եւ մասնագիտական թիմը հիանալի աշխատանք էր կատարում այդ խնդիրն ամբողջովին վերացնելու ուղղությամբ»,- ավելացնում է 3-րդ ծնողը:

33 ծնողից 18-ը հարցումների ընթացքում պատասխանել է, որ ԿԱՊԿՈՒԻ երեխայի նախադպրոցական կրթությունն իրականացվում է եւ՝ Գյումրու համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունում, եւ՝ խնամքի, աջակցության կենտրոնում, 10-ը՝ միայն Գյումրու


համայնքային նախադպրոցական հաստատություններում, մեկ հոգի՝ Գյումրու համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունում և Երևանում՝ լոգոպեդի մոտ, 1 հոգի՝ Գյումրու համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունում և Էմիլի Արեգակ կենտրոնում, 1 հոգի՝ Գյումրու համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունում և վերականգնողական կենտրոնում, 1 հոգի՝ Գյումրու համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունում և Ավստրիական հիվանդանոց՝ լոգոպեդ, հատուկ մանկավարժ, 1 հոգի՝ Գյումրու համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունում, Իտալական պոլիկլինիկա հոգեբանի մոտ ու Արևամանուկ կենտրոն՝ լոգոպեդի մոտ:

Ինչպե՞ս եք գնահատում ներառական կրթության կազմակերպումը տվյալ կրթական հաստատությունում եւ Գյումրիում. այս հարցին 10 ծնող չի ցանկացել պատասխանել, 15 ծնող պատասխանել է՝ «շատ լավ», 8 ծնող՝ «վատ»:

20 ծնող պատասխանել է, որ թիմի աշխատանքի արդյունքում երեխայի մոտ նկատել են կրթական եւ հոգեբանական առաջընթաց, 13 ծնող չի ցանկացել այս հարցին պատասխանել:

Թիմի աշխատանքի արդյունքը


Պատկեր 6



33 ծնողից 20-ը պատասխանել է, որ տնից նախադպրոցական ուսումնական հաստատություն հասնելու դժվարություններ (տրանսպորտային, շարժողական, ֆինանսական միջոցների սղության խնդիրներ) չունեն, 3 ծնող պատասխանել է, որ այդ խնդիրները մասամբ են առկա, իսկ 10-ի համար նման դժվարություններ առկա են:

Տնից նախադպրոցական ուսումնական հաստատություն հասնելու դժվարություններ

Պատկեր 7




33 ծնողից 32-ը պատասխանել է, որ նախադպրոցական ուսումնական հաստատության ընտրությունը պայմանավորված է տանը մոտ լինելով, ընտանիքի անդամի՝ նույն տեղում աշխատելով, իսկ 1-ը պատասխանել է, որ մի քանի տեղ դիմել են, չեն ընդունել՝ պատճառաբանելով, որ տարիքը փոքր է:

33 ծնողից 20-ը պատասխանել է, որ երեխայի՝ նախադպրոցական հաստատություն ընդունվելու ընթացքում խնդիրներ չեն առաջացել, 10-ը պատասխանել է, որ մասամբ են առաջացել խնդիրներ, 3-ը հաստատել են, որ խնդիրներ եղել են:

Նախադպրոցական հաստատություն ընդունվելու ընթացքում խնդիրների առկայություն

Պատկեր 8



Ֆինանսավորման խնդիրը

«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեությունը:

«Կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն սաները, որոնք ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ՝ 1) ձայնի և խոսքի, 2) լսողական, 3) տեսողական, 4) ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող, 5) շարժողական: Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սահմանում է Կառավարությունը, որի ընդունման ժամկետ սահմանվել է 2021 թվականի մարտի 15-ը: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում այս մասով դեռեւս չկան մոտավոր կամ նախնական հաշվարկներ»¹¹:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը պատասխանել է («Լուսափայլ» կրթամշակութային հասարակական կազմակերպության հարցմանն ի պատասխան), որ համաձայն ՀՀ վարչապետի՝ 2020 թվականի հուլիսի 23-ի «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի կիրակումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 831-Ս որոշման հավելվածի 7-րդ կետի՝ «Նախադպրոցական

¹¹ <https://cutt.ly/fhF8sOR>

ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը եւ չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետ սահմանված է 2020 թվականի փետրվարի 1-ին տասնօրյակը:

Գյումրու համայնքապետարանը («Լուսափայլ» կրթամշակութային հասարակական կազմակերպության հարցմանն ի պատասխան) տեղեկացրել է, որ 2020 թվականին համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում սովորող կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության եւ դաստիարակության գծով համայնքը գումար չի տրամադրել: Միաժամանակ տեղեկացրել է, որ համայնքապետարանը նախնական հաշվարկներ չի կատարել՝ պարզելու, թե ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր երեխայի նախադպրոցական կրթության կազմակերպման համար որքան գումար է անհրաժեշտ:

Ընտրված 11 նախադպրոցական ուսումնական հաստատությունների 2020 թվականի տարեկան ընդհանուր բյուջեն 341 մլն 295 հազար ՀՀ դրամ է: Տվյալները տրամադրել է Գյումրու համայնքապետարանը

Գյումրու 11 նախադպրոցական ուսումնական հաստատությունների 2020 թվականի բյուջեները

Աղյուսակ 5

N	ՆՈՒՋ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՀՈԱԿ	ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ (2020 ԹՎԱԿԱՆ, ՀՀ ԴՐԱՄ)
1	«Անի պարտեզ»	41 071 900
2	«Հուսո առագաստ»	39 009 900
3	«Գյումրու Մանկիկ»	21 292 100
4	«Լիանա»	30 842 000
5	«Լապտերիկ»	29 232 800
6	«Հենգել եւ Գրետել»	28 940 300
7	«Կարմիր գլխակ»	17 326 600
8	«Փարոս»	33 973 600
9	«Ժպիտ»	37 488 200
10	«Երազանք»	25 156 900
11	«Գոհար»	36 960 700
ԸՆԴՀԱՆՈՒՐ		341 295 000

Ուսումնասիրության ընթացքում «Լուսափայլ» կրթամշակութային հասարակական կազմակերպությունը նաեւ պարզել է, թե ընտրված ուսումնական հաստատություններում քանի երեխա է նախադպրոցական կրթություն ստանում, նրանցից քանիսն ունի կրթության եւ զարգացման

առանձնահատուկ պայմանների կարիք, հաշմանդամության կարգ եւ ֆունկցիայի զարգացման խնդիրներ:

Հոկտեմբերի 12-ին Գյումրու թվով 11 համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում, ըստ ցուցակի, սովորել է 840 սան: Նրանցից 52-ը, ըստ տնօրենների, կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունի: 52 սանից 4-ն ունի հաշմանդամության կարգ: Համեմատաբար շատ սաներ ունի «Անի պարտեզ» մանկապարտեզը, որտեղ մեծ է նաեւ ԿԱՊԿՈՒ երեխաների թիվը: 11 նախադպրոցական հաստատությունից միայն մեկը՝ «Գյումրու Մանկիկը» չունի ԿԱՊԿՈՒ երեխաներ:

Երեխաների թվաքանակը՝ ըստ ցուցակի. տեղեկությունը տրամադրել է Գյումրու համայնքապետարանը (12 հոկտեմբերի 2020թ).

Հաշմանդամ եւ ԿԱՊԿՈՒ երեխաների թվաքանակը տրամադրել են Գյումրու նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենները (12 հոկտեմբերի 2020թ).

Աղյուսակ 6

N	ՆՈՒՀ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՀՈԱԿ	ԵՐԵՒԱՆԵ ՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ՑՈՒՑԱԿԻ	ԿԱՊԿՈՒ ԵՐԵՒԱՆԵՐ Ի ԹԻՎ	ՀԱՇՄԱՆԴԱ ՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԹԻՎ	ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
1	«Անի պարտեզ»	111	15	2	Խոսքի, լսողության, մտավոր հետամնացության, հենաշարժողական համակարգի
2	«Հուսո առագաստ»	103	1	0	հոգեբանական, վարքային եւ հուզականային ոլորտի խանգարումներ
3	«Գյումրու «Մանկիկ»	54	0	0	-
4	«Լիանա»	75	3	0	Խոսքի խանգարում

5	«Լապտերիկ»	69	1	0	Խոսքի խանգարում, վարքի եւ հուզականային ոլորտի խանգարումներ
6	«Հենգել եւ Գրետել»	62	4	0	Խոսքի խանգարում, հենաշարժողական համակարգի խախտումներ, վարքային եւ հուզականային ոլորտի խանգարումներ

7	«Կարմիր գլխակ»	24	3	0	Տեսողության խանգարում, վարքային եւ հուզականային ոլորտի խանգարումներ
8	«Փարոս»	105	11	0	Խոսքի խանգարում, մտավոր հետամնացություն ունեցող, վարքային եւ հուզականային ոլորտի խանգարումներ
9	«Ժպիտ»	85	1	0	վարքային եւ հուզականային ոլորտի խանգարումներ
10	«Երազանք»	52	5	0	Խոսքի խանգարում, հենաշարժողական համակարգի խախտումներ, վարքային եւ հուզականային ոլորտի խանգարումներ
11	«Գոհար»	100	8	2	Խոսքի, տեսողության խանգարում, մտավոր հետամնացություն, հոգեբանական, վարքային եւ հուզականային ոլորտի խանգարումներ
ԸՆԴՀԱՆՈՒՐ		840	52	4	

Եզրակացություններ եւ առաջարկություններ

Եզրակացություն 1. Ներառական կրթության նպատակները, էությունն ու գաղափարը մեծամասամբ հասանելի չեն ԿԱՊԿՈՒ եւ ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներին, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին: Նրանք համընդհանուր ներառականության մասին գրեթե տեղեկացված չեն:

Եզրակացություն 2. Առկա է նաեւ մասնագետների պակասի խնդիր:

Եզրակացություն 3. ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներին եւ համայնքապետարանի միջեւ չկա համագործակցություն եւ կապ:

Եզրակացություն 4. Խորհրդային տարիներին են կառուցվել հատուկ դպրոցները (որոնք վերակազմակերպվել են տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների) եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունները, որոնց շենքային պայմաններն հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին:

Եզրակացություն 5. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում եւ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների կողմից ծառայությունների մատուցման որակը չի վերահսկվում, ինչի պատճառով շարունակվում են ծնողների դժգոհությունները:

Եզրակացություն 6. Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման վերաբերյալ ծնողներն ունեն տարբերակված մոտեցում: Նրանք նաեւ բողոքում են երեխաների գնահատման եւ վկայագրման գործընթացի կարճատեւ լինելուց, որի հետեւանքով հաճախ չեն համաձայնում գնահատման արդյունքների բովանդակության հետ եւ ստիպված են դրանք բողոքարկել հանրապետական կենտրոններում:

Առաջարկություններ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

- Ապահովել նախադպրոցական ուսումնական հաստատությունների եւ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների շենքային պայմանների վերագնահատումը եւ, սահմանված ժամանակացույցի համապատասխան, նշված հաստատություններում ապահովել ֆիզիկական մատչելիություն:
- Ձեռնամուխ լինել նեղ մասնագիտական եւ ուսումնաօժանդակ նյութերի հրատարակմանը եւ դրանց տրամադրմանը նախադպրոցական ուսումնական հաստատություններին եւ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններին:
- Ներդնել մեխանիզմներ նախադպրոցական ուսումնական հաստատությունների եւ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների կողմից ծառայությունների մատուցման որակը վերահսկելու եւ բարելավելու նպատակով:
- ԿԱՊԿՈՒ երեխաների ծախսերի ֆինանսավորման սանդղակը մշակելուց հետո այն ներկայացնել հանրային քննարկման եւ հաշվի առնել մարզերում համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովի լինելու հանգամանքը:
- Դյուրացնել եւ շարունակաբար բարելավել ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքի գնահատման գործընթացը՝ այն դարձնելով ավելի երկար, համակողմանի եւ թափանցիկ:

Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոն

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների, ծնողների համար ամսական մեկ-երկու անգամ կազմակերպել կլոր սեղան քննարկում՝ ոլորտում փորձ ունեցող մասնագետների ներգրավմամբ:
- Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կարիքի գնահատմանը պարտադիր մասնակից դարձնել նախադպրոցական ուսումնական հաստատության այն մասնագետին, որն աշխատում է տվյալ երեխայի հետ, որպեսզի ապահովվի օբյեկտիվ դիտարկում:

Գյումրու համայնքապետարան

- Ակտիվ աշխատանքներ տանել հասարակական կազմակերպությունների, համայնքի բնակիչների հետ կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրների լուծման նպատակով:
- Տարեկան կտրվածքով սահմանել ժամանակացույց՝ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում կատարելու հարցում-գնահատումներ, որոնց արդյունքում պարզ կլինի շահագրգիռ կողմերի՝ համակարգում առկա խնդիրների ամփոփ պատկերը:
- Հարցում-գնահատումների միջոցով վեր հանված խնդիրների լուծում ՏԻՄ-ի լիազորությունների շրջանակում: Այդ լիազորություններից դուրս խնդիրների լուծման առաջարկությունների գրավոր ներկայացում ՀՀ ԱԺ-ին: